ՀՏԴ 82-1;821.19

Հ.Պ. ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆԻ 20-ՐԴ ԴԱՐԻ 70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Ինչպես Մուշեղ Իշխանի ստեղծագործության, այնպես էլ մեր ազգային նկարագրի համատեքստում քննվում են գրողի 20-րդ դարի 70-ական թթ. գրած լավագույն դրամաները՝ «Մեռնիլը որքան դժվար է» (1971) և «Կիլիկիո արքան» (1975):

Առանցքային բառեր՝ դրամատուրգիա, հայրենասիրություն, աշխարհայացք, բնազանցություն, վերածնունդ, պետականություն, արժեքների համադրում:

Մուշեղ Իշխանը 20-րդ դարի 70-ական թթ. գրեց իր լավագույն դրամաները՝ «Մեռնիլը որքան դժվար է»(1971) և «Կիլիկիո արքան»(1975):

«Մեռնիլը որքան դժվար է» դրաման հումորի որոշակի չափաբաժնով գրված, հետաքրքիր մատուցման ձևով ստեղծված երկ է, որտեղ խոսվում է ազգային ինքնությունը պահելու, սեփական նկարագիրը ժամանակի մեջ ավելի դիմադրելի, կատարյալ դարձնելու պահանջի մասին: Այսօր Իշխանի բեմ հանած տրագիկոմիկական իրադրությունն այլևս այնքան էլ հեռու չէ. եթե դրամատուրգի ասելիքը 1970-ականներին թվում էր ֆանտաստիկ, անիրականանալի երևույթ, ապա այժմ արդեն խոսվում է հնարավորության մասին, որ իրագործելու է մարդկությունը: Այդ պարագայում արդեն հարկադրված կլինենք դիմակայելու այլ կարգի մարտահրավերների, ինչի մասին մեզ զգուշացնում է Մուշեղ Իշխանը: Սա, իհարկե, լուրջ խնդիր է, թեև գրողի միտումը, որ արտահայտվում է վերջին տողում, որոշակիորեն թուլացնում է ասելիքի ընդհանուր տպավորությունը: «Մեռնիլը որքա՜ն դժվար է» բանաձևումը անցած պատմության սեղմ արտահայտությունն է, մարդկությունը նոր մարտահրավերների առջև է կանգնած: Առաջին հայացքից կարող է թվալ, թե նա հաղթահարում է ամեն կարգի դժվարություն, ժամանակի մեջ կարողանում է անգամ մահը կասեցնել՝ շրջանցելով բնության օրենքները, իսկ իրականում հայտնվում է նոր խնդիրների առջև: Մարդը միայն բանական էակ չէ, այլև սոցիալական, մարդը մարմին է, հոգի՝ իր տարատեսակ որակներով ու ժամանակի մեջ ձևավորված կարողություններով, այս ամենը կասեցնել, սառեցնել ժամանակի մեջ պարզապես անհնար է, ինչի մասին էլ բարձրաձայնում է Մուշեղ Իշխանը («Սառցարանեն ելած մարդը»):

Գրողի նվաճումը սփյուռքահայ դրամատուրգիայի պատմության մեջ «Կիլիկիո արքան» է: Այստեղ չկան ո՛չ կանխակալ մտեցումներ և ո՛չ էլ լեզվական բանաձևումներ, որոնք իմաստային բեռը վերցնեին իրենց վրա՝ որոշակիորեն

ակնհայտ դարձնելով հեղինակային միտումը: Այսուհանդերձ, Իշխանի այս երկը կարևոր է մեկ այլ առումով, որևէ երկ այնքան սերտորեն կապված չէ գրողի բանաստեղծությանը, որքան այս դրաման, իսկ Մուշեղ Իշխանն առաջին հերթին բանաստեղծ է, ապա նոր միայն արձակագիր կամ դրամատուրգ: Ակնհայտ է նաև՝ գրողը բանաստեղծությունից է գնացել դեպի դրաման, նաև արձակը, քանի որ արծարծվող գլխավոր թեման՝ երազի և իրականության փոխհարաբերության խնդիրները, մշտապես անհանգստացրել են նրան, դրանք, կարելի է ասել, Մուշեղ Իշխանի համար աշխարհայացքային նշանակություն ունեն: Այս հանգամանքն էլ, բնականաբար, արդարացիորեն չի վրիպել մեր գրականագիտության ուշադրությունից:

Այսուհանդերձ, դժվար է համաձայնել այն պնդումներին, որ կյանքը և երազը գրեթե հավասարարժեք են գրողի համար:

«Կիլիկիո արքան» կարելի է համարել Իշխանի երկերի փիլիսոփայական սինթեզը, քանի որ այն ընթերցող-հանդիսատեսին տանում է միանգամայն նոր իրողության: Դրամայի գործողությունը գերակշիռ մասով ներքին է և ավելի շուտ վերաբերում է պատմական հայրենիքում ձևավորված, կայացած ժողովրդի հայրենազրկումից հետո տեղի ունեցած հոգեբանական տեղատվություններին, ուր բացահայտվում են մեր նկարագրի մեջ եղած որակները: Կամ կարելի էր գնալ ինքնախաբեության ճանապարհով, այսինքն՝ մոռանալ անցած ուղին և ապրել անցյալից կտրված, կամ էլ այլ լուծում գտնել՝ պատմության անակնկալներին դիմակայելու համար: Մուշեղ Իշխանը չի գնում ինքնախաբեության ճանապարհով, այլ կերպ ասած՝ չի մոռանում անցյալը, նա գնում է հակադիր ընթացքով՝ պատրաստ լինել հայրենիքի տերը դառնալու՝ անկախ այն հանգամանքից, թե դա երբ է տեղի ունենալու: Գործադրելով Շանթից եկող դրամատուրգիական խոսքի մատուցման տեխնիկան՝ գրողը ներքին ձայնի գործադրմամբ բարձրաձայնում է առաջին հայացքից անհաղթահարելի թվացող նպատակը. «Հավատա՛ դուն քեզի և կը դառնաս բանակ, կը դառնաս զորավար այդ բանակին և արքա՝ Կիլիկիո գահին» [1] էջ 474:

Ամբողջ դրաման նյութի աշխարհի և մետաֆիզիկական երևույթների միջև եղած պայքարն է: Գործող անձինք բաժանված են այս սկզբունքով: «Կեղծիքն է ձեր խելք կոչվածը և ձեր ամբողջ իմաստությունը նյութի պաշտամունքեն անդին չանցնիր»,– ասում է Զապելը [1] էջ 507:

Ստացվում է, որ Մանդելշտամի բնորոշումը՝ կապված մեր ազգային նկարագրի հետ, համընկնում է ինչպես Հրանտ Մաթևոսյանի «Չեզոք գոտի» դրամայի գաղափարների, այնպես էլ Մ. Իշխանի պիեսի ներքին ուղղվածությանը: «Իրերի աշխարհին հավատացող մարդ է հայը: Նրա համար քարը քար

է, Արագածն՝ Արագած» (Զրույցներ, 51): Նա մինչև վերջ չի ընկնում և մինչև վեր չի բարձրանում: Չի դառնում Մակբեթ՝ մինչև հատակն ընկնելով, բայց և Մագելլան չի դառնում:

Մենք դժվարանում ենք կողմնորոշվել մեզ համար ճակատագրական դարձած հարցերում: Դժվար է ընդունել էդ. Աթայանի այն պնդումը, թե տրվելով համաշխարհային մետաֆիզիկային՝ մենք խորշում ենք գործապաշտ նպատակներ հետապնդող հաշվարկներից: Բանն էլ այն է, որ մենք սիրում ենք հաշվարկել կենցաղի մակարդակում և մնում ենք բացառապես անհատական հետաքրքրությունների ոլորտում: Եթե մենք չհավատայինք նյութական աշխարհի ընձեռած հնարավորություններին, ապա հազիվ թե Կանտը նկատեր հայերի գործապաշտ կեցվածքն առևտրի բնագավառում [2]:

Մաթևոսյանն այս հանգամանքը այլ պարագաներում ևս նկատել է: Սասունցի Դավիթը կարծես թե ձեռքը ոսկուն էր տանում և ոչ կրակին: Մուշեղ Իշխանի ներկայացրած իրականությունը, միջավայրը գործում է այս տրամաբանությամբ. Վահանն իրեն կոշիկների առևտրում է թագավոր զգում և ամեն անգամ հեգնում է եղբորը, որ միանգամայն այլ մտահոգություններ կամ պատկերացումներ ունի իր ժողովրդի անցած և անցնելիք ճանապարհի հանդեպ: Եղբայրների միջև եղած պայքարը իրերի աշխարհի և բնազանցության միջև եղած պայքարն է, որ բաժանում է մարդկանց: Բնազանցությունից հետևողական խորշանքը մեզ քաղաքականության մեջ դարձնում է եթե ոչ անզոր, ապա դանդաղաշարժ ու չկողմնորոշվող: Դժվար է հավատալ մի բանի, ինչը չկա, կամ թվում է, որ չկա: Մինչդեռ մետաֆիզիկական արժեքները նույնքան կարևոր են, եթե ոչ ավելի, որքան ակնհայտ երևույթները (տես՝ Մաթևոսյանի «Չեզոք գոտի» պիեսը):

Լևոնը դառնում է մեր անցյալի պատմության մեջ պարտությունների տերը, որ վերագտնելու է խաթարված ժամանակի պարտադրանքից դուրս գալու ելքերը, քանի որ անհնարին է մարդուց խլել վերածննդի ծարավը: Մուշեղ Իշխանն իր դրամայով ցանկանում է ստեղծել համընդհանուր ազգային երազանք, որն արդեն պատմության մեջ գոյություն է ունեցել, իսկ այսօր այն պիտի հառնի մեր էության մեջ՝ հարուցելով քո՝ պատմության իրական տերը լինելու հրամայականը: «Երանի՜ հավատացողներուն, երանի՜ ընտիրներու այն բանակին, որ պիտի հետևի ինձի...»: Ակնհայտ է, որ Մուշեղ Իշխանը կրկնում է Հովհաննես առաքյալի խոսքը, բայց այն արդեն ներքուստ միանգամայն այլ իմաստ ունի և կարևոր է մեզ համար: Առաքյալի խոսքով, երբ Քրիստոսի մեջ մարդը կտեսնի Աստծո Որդուն, այդ ճանապարհով միայն նա ձեռք կբերի անմահություն: Այն պարագայում, երբ մենք կհավատանք, հետևաբար՝ տեր կկանգնենք մեր

անցյալի արժեքների իրական գոյությանն ու թագավորին, իբրև ժողովուրդ ձեռք կբերենք անմահություն: Հետևաբար՝ բնազանցական երևույթները նույնքան կարևոր են, որքան նյութական արժեքները: Մենք գոյատևելու, ժամանակի մեջ հառնելու ենք որպես պետականությունը կայացնող ազգ՝ նյութական և մետաֆիզիկական արժեքների համադրման արդյունքում, ինչի մասին էլ մեզ հուշել է Մուշեղ Իշխանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Իշխան, Մ.**, Թատերախաղեր,Պէյրութ, Վահէ Սէթեան տպարան, 1980:
2. **Кант И.,** Соч. в шести томах, т. 6, М., 1966, с. 572-573.

А.П. КАРАГУЛЯН

ДРАМАТИЧЕСКИЕ ПРОИЗВЕДЕНИЯ МУШЕГА ИШХАНА 70-ЫХ ГГ. XX ВЕКА

Анализируются пьесы, занимающие важное место в драматургическом творчестве Мушега Ишхана, в частности, драма “Царь Киликии”, которая является драматическим шедевром писателя. В статье большое значение придается наличию противоположных полюсов в общественной жизни.

Ключевые слова: драматургия, патриотизм, мировоззрение, натурализм, ренессанс, государственность, сочетание ценностей.

H.P. KARAGULYAN

THE DRAMATIC WORKS OF MUSHEGH ISHKHAN IN THE 70S OF THE 20TH CENTURY

The plays that occupy an important place in the dramatic work of Mushegh Ishkhan, in particular, the drama of the King of Cilicia, which is a dramatic masterpiece of the writer are analized. The song is considered both in the context of the writer's work and our national image. The article attaches great importance to the existence of opposite poles in our social life.

Keywords*:* playwriting, patriotism, worldview, naturalism, renaissance, statehood, combination of values.